




ՊՐՈՖ. ԳՐԿՏ. Լ. ՄԵԼԻՔՍԵՐ-ՔԵԿ

Դիտարկան վաստակավոր գործիչ:

ՀԱԿՈՒ ՇԱՀԱՆ-ՋՐԱԿԵՏՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՆՈՐԱՀԱՅՏ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԱՆՏԻՊ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ (Մահվան 120-ամյակի առթիվ)



Հակոբ Շահան-Ջրակետը (Chahan de Cirbied, II. M. III. Tserpet, ըստ Մ. Նալբանդյանի՝ Шахан-Черпет) 1826 թվականից ֆրանսիացիների դասատու էր Նորսուրաց Ներսիսյան դրպրոցում, իսկ 1828—1829 ուսումնական լիվին տեսուչ նույն դպրոցում:

Նրա մանկավարժական գործունեության մասին գրականության մեջ որոշ անգիտություններ կան ամփոփված Ա. Երիցյանի¹ և Մ. Մալխասյանի² համապատասխան գործերում: Իսկ նրա դրական-դիտական վաստակների մասին մանրամասն, ինչ ոչ սպասիչ կերպով, խոսում են Գարեգին վարդապետ Ջարրշանյանը³ և նույն Ա. Երիցյանը⁴:

Հակոբ Շահան-Ջրակետյանը սիրիացի հայ էր: Ծնված լիվելով մոտ 1766 թվականին Ե-

ղևարում (Ուռնայում, այժմյան Ուրֆա), այնտեղից դարավերջում դադարել է Փարիզ, ուր և սկսել է մանկավարժական և գրական-դիտական գործունեությունը, ձեռք բերելով համբավ հմուտ հայադեմոստիկ—սովետի:

Փարիզում Ջրակետը աշխատել է ֆրանսիական արքայական մատենադարանին կից գտնվող «Լերենյան կենդանի լեզուների դպրոց»-ում, իրեն հայերենի դասատու, որով և հնարավորություն է ստացել ի մոտո ծանոթանալու և կապվելու աթաթամանակվա ֆրանսիական դիտական շրջանների հետ:

Ջրակետի մանկավարժական գործունեությունը Փարիզում տևել է նախ 1799—1801 թվականները, իսկ 1811—1826 թվականներին նա ղեկավարել է հիշյալ դպրոցում «Հայոց լեզվի ամբիոն»-ը, ինչպես այդ, ի միջի այլոց, նշված է Մ. Նալբանդյանի ուսերեն դիտարկումներում շարադրության մեջ՝ «Հայոց լեզվի ուսումնասիրությունը Եվրոպայում և հայ գրականության դիտական նշանակությունը»:

Փարիզում ապրած միջոցին Ջրակետը ձեռնամուխ է լինում մի շարք հայագիտական հրատարակությունների թև՝ անհատական և թև՝ ֆրանսիացի այլևայլ դիտականների ընկերակցությամբ:

5 Մ. Նալբանդյան, «Սեփարդ երկեր», խմբագրություն և կոմենտարներ Աշոտ Հովհաննիսյանի, Երևան—Մոսկվա, 1935, էջ 30, 38: 6 Մ. Նալբանդյան, «Իրկերի լիակատար ժողովածու», հատ. II, Երևան, 1947, էջ 331 (Шахан-Черпет):

¹ Պատմություն 75-ամյա դոյությունների Ներսիսյան դպրոցի ղեկավարի, որ ի Թիֆլիս (1821—1829 թ.), հետ. Ա. (1821—1850 թ.), աշխատասիրակաղ Աղեհանյանի, Երիցյանի, Թիֆլիս, 1898, էջ 75, 77—81, 131—150:

² «Համառոտ պատմություն Ներսիսյան դպրոցի եթանասունհինգամյա դոյությունների (1821—1899), կազմեց Ստ. Մալխասյանը, Թիֆլիս, 1900, էջ 33—36:

³ «Ուսումնասիրություններ հայ լեզուի և մատենագրության վերաբերյալ», 2. Պարիզից [Զարբանակալ], Երևան, 1895, էջ 109—129:

⁴ Ա. Երիցյանը, «Հիշյալ աշխատությունում», էջ 134—150:

Այս կարգի Զրպետի առաջին գործը լինում է «Հետադոտությունք ի վերայ հին պատմութեան Ասիոյ» գիրքը, Գրանսերեն, Փարիզ, 332 էջ:

Առաջին Հայրենական պատերազմն ավարտելուց և Մոսկվայում կաղարջանների անվան Արևելյան լեզուների ճեմարանը հիմնելուց հետո (1814 թ.) նույն այդ աշխատությունը Ա. Խուզարաշյանը (հետագայում անուն վաստակած բառարանագետը) վերածում է ուսանողների և հրատարակում հետևյալ վերնագրով. «И. М. Ш. Чирбет и Ф. Мартин, «Этнографические извлечения из древнейшей истории Азии, почерпнутые из восточных рукописей, хранящихся в Парижской библиотеке, и из иных источников, изданные в Париже на французском языке в 1806 году, а ныне здесь переведенные Александром Худобашевым», СПб. 1816.

1810 թվականին Զրպետը գրում է «Ընդհանուր նկարագիր Հայաստանի» գործը⁶։ Այս Զրպետը հայոց լեզվի ամբիոնի գրավելու պահից (1811 թ.), Փարիզում մասնակցություն է ունենում հետևյալ աշխատությունների հրապարակման գործում:

Նույն 1811 թվականին Զրպետը մասնակցում է Սեն-Մարտենի ձեռնարկած գործին՝ Մատթեոս Եղևացու (Ուտհայեցու) պատմության մի շարք մանրամասնությունների մեկնարկության գծով, որոնք վերաբերում են Րյուլանդիայի արշավանքների: Ղևպի Պաղեստին, Հրատարակիչը այդ նյութերը քաղել է Փարիզի արքայական մատենադարանի պատկանող հայերեն գրչագրից⁷:

1812 թվականին Զրպետը հրապարակում է «Տեղեկություն ի վերայ երկուց գրչագրաց, որ բովանդակեն զՊատմություն Մատթեի երիցու, և քաղուած ի պատմագրութենէ անտի վերաբերելոցն առաջին խաչակրութեան, ի հայ և ի գաղղիներէն»⁸:

Միաժամանակ Զրպետը ձեռնարկում է յնորհուրդք (թելադրությունք) առ հայս հարաւային դաւառաց պետութեանն ուսաց յաղագս մշակութեան բամբակի»⁹ աշխատությունը:

1817 թվականին Զրպետը երկու այլ ընկերների հետ միասին մասնակցում է Պարս-

կաստանի նկարագրությանը նվիրւած մի գրքի հրատարակության, որ է «Տեղեկութիւն ի վերայ այժմեան վիճակին Պարսկաստանի, ի լեզու պարսիկ, հայ և գաղղիացի, ի Միր Տաւուտ Մատուրէ, Լանգլեսէ և ի Զոպետէ»¹⁰: Գիրքը հիմնականում գրել են Միր-Դավուդ-Մատուր Մելիք-Շահնազարը և Մ. Լանգլեսը, որոնք շրջել էին պարսկաստանը ֆրանսիական կառավարության հանձնարարությամբ, իսկ Զրպետը մասնակցել է դրքում հայերեն տեքստի մշակման գծով:

1820 թվականին Զրպետը, Յրանսիայի հնագիտական ընկերության պատվերով, գրում է «Հկառավարութենէ և գերօնից նախնի հայոց» աշխատությունը, որը հիշատակում են Հ. Գ. Զարբնաւյանը¹¹ և Հ. Ա. Ղաղիկյանը¹², և որը, սակայն, մնացել է անտիպ: Այս աշխատությունն է, ըստ երեւոյթի, մի մասն այն գործի, որը նորերս հայտնաբերվեց Վրաստանի Կենտրոնական պատմական արխիվում և որի մասին կիսսենք ստորև:

1823 թվականին Զրպետը հրատարակում է գրաբարի սովոր դասագիրքը, որը հետևյալ ընդարձակ վերնագիրն է կրում. «Թեւականութիւն արամեան լեզուին, յորում բացատրին սկզբունք և կանոնք արամեան լեզուին ըստ հեղինակութեան ընտրելագոյն քերթողաց, ուղղախօս մատենագրաց և սեպհական սովորութեանց հայկական բարբառոյ: Յօրինեալ ի պէտս ուսման աշակերտաց արքայական և մասնաւոր դպրոցի արեւելեան լեզուաց թագաւորական գրատան: Ի Յակովբայ Շահան-Զրպետեան յնդեսացոյ» (նույնը և ֆրանսերեն)¹³:

Այս դասագիրքը սուր քննադատության ենթարկվեց Զրպետի երրեմնի աշակերտ Հովհաննես վարդապետ Զոհրապյանի կողմից «Journal Asiatique»-ի էջերում, որը հրատարակվում էր նույնի (Զրպետի) մի այլ աշակերտ Սեն-Մարտենի խմբագրությամբ: Հավանական է, որ այս գրախոսականը մեծ վիշտ պատճառած լինէր հեղինակին, որի հետևանքով նա որոշեց Փարիզից հեռանալ, չնայած, որ ինքը 40 էջանոց ընդարձակ բացատրություն-պատասխան էր ղրկել այդ քննադատության առթիվ¹⁴:

Վերջապես, 1824 թվականին Զրպետը հրատարակում է, ըստ Փարիզի արքայական

⁶ «Ուսումնասիրությունք հայ լեզուի և մատենագրութեան յԱրեւմուտս», էջ 110:

⁷ Հմմտ. Հ. Արսեն Ղաղիկյան, «Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի», հատ. Ա, Վենետիկ, 1909—1912, էջ 1865:

⁸ Նույն տեղում:

⁹ «Ուսումնասիրությունք հայ լեզուի և մատենագրութեան յԱրեւմուտս», էջ 110—111.—Հ. Ա. Ղաղիկյան, նույն տեղում:

¹⁰ Հ. Ա. Ղաղիկյան, նույն տեղում, էջ 1003:

¹¹ «Ուսումնասիրությունք հայ լեզուի...», էջ 111:

¹² Ա. Նրիցյանց, հիշյալ աշխատությունում, էջ 135:

¹³ Հ. Գ. Զարբնաւյան, «Հայկական մատենագիտութիւն», Վենետիկ, 1883, էջ 705—706:

¹⁴ Հմմտ. Ա. Նրիցյանց, հիշյալ աշխատությունում, էջ 136—137:

մատենադարանի հայերեն ձեռագրերի՝, Դիոնեսիոս Թրակացու «Արունստ քերական-նե»-ն, որն, ինչպես հայտնի է, մեծ գեր խաղաց հայ բանասիրական-լեզվագրական մտքի զարգացման պատմության սեշ սկսած 2— է դարից: Սա, իրոք, ասորանիկ հրատա-րակությունն էր մեծահռչակ հույն բանասե-րի երկասիրության, հետևյալ վերնագրով. «Քերականութիւն Դիոնէսիոսի Թրակացոյ, իանեալ ի Բագաւորական գրատան Փարիզոյ և ի լոյս ընծայեալ ի յոյն և ի հայ և ի գաղ-ղիացի լեզուս, հանդերձ ծանօթութեամբ և բացատրութեամբ ի Յակովբայ Շահան-Ջր-պետեան եղևացեալ»:

Ի ղեպ, նշենք, որ Դիոնեսիոս Թրակացու այս դործը վերահրատարակեց հետագայում Ն. Ադոնցը:

Այսպես թի այնպես, իր վերջին հրատա-րակություններում Ջրպետն իր ազգանունի՝ իշխատակությանը գրքերի տիտղոսաթերթին՝ թե՛ ֆրանսերենին և թե՛ հայերենին՝ կցում է իր պաշտոնավարության և կոչումների այսպիսի տվյալներ. «ղասատու վարժապետ՝ լայկական բարրառոյ յԱրքայական դպրոցի արևելյան լեզուաց լիազատական գրատան լի Փարիզ, տանդամ»¹⁵ Ելնկերութեանց Հա-մայսարանին բնադիտաց Գաղղիոյ», «Դա-մարձակին (այսինքն՝ ժողովին—Լ. Մ.-Բ.) աշխարհագրաց Փարիզոյ», «Հայկական ձե-մարանին Սրբոյն Կազարու վնէժ (այսինքն՝ վանետիկ—Լ. Մ.-Բ.) քաղաքի» Փարիզի «կսիական ընկերությունը» այստեղ չի հիշ-վում, հավանական է, այն պատճառով, որ այն իմնվել էր միմիայն 1822 թվականին և այդ պահին Ջրպետը կարող էր այնտեղ դեռ ընտրված չլինել:

Ջրպետը զբաղություն է սկսում Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցու հետ, հավա-նական է, Թիֆլիսում գործող ֆրանսիական հյուպատոս Ժակ-Ֆրանս-Գտմրայի¹⁶ միջո-ցով: Ընդ սմին Ջրպետի նամակներն ուղղը-ված Ներսես արքեպիսկոպոսին, կրում են 1816, 1815, 1824, 1825 և 1826 թվահամար-ները¹⁷:

15 Այժմյան ցուցակագրությամբ N N 269 և 270 (F. Macler, «Catalogue des manuscrits arméniens et géorgiens», Paris, 1908, pp. 141—144):

16 Լ. Ա. Կալիկյան, նույն տեղում, էջ 533:

17 Ն. Ադոնց, «Արունստ Դիոնեսիոսի քերականի և հայ մեկնությունը նորին», Պետերբուրգ, 1915:

18 Գամրայի մասին տե՛ս Մ. Ա. Полноевков «Ев-ропейские путешественники по Кавказу 1800—1830 гг. (մեր խմբագրությամբ), Тбилиси, 1946, стр. 86—89.

19 Ա. Նրիցյանց, հիշյալ աշխատությունում, էջ 139 և այլն:

Ներսես արքեպիսկոպոս՝ Աշտարակեցու խնդրով է, որ Ջրպետը կազմում է նախա-դիծ Թիֆլիսում հիմնվելիք դպրոցի համար՝ Առաջարկությունը դպրոցական կարգադրու-թեանց ի պէտս հայկական ուսումնարանին՝ Տփիսիզ քաղաքի վերնագրով, որ հրատարա-կել է Ա. Նրիցյանը¹⁸:

Այդ նախագիծը նախատեսում էր Ներսիս-յան դպրոցի կազմակերպումը («ղասակադ-րությունը վարժարանաց ուսումնարանին») 12 բաժնից, որոնցից 1—10 հեղինակը կա-չում է ավարտարան, իսկ 11—12՝ «լսարան» իր հերթին, «լսարան»-ը ընդգրկում էր «կա-նոնադրական» և «եկեղեցական» բաժիննե-րը:

Իհարկե, պատահական չէր, որ այս «ա-ռաջարկութեանց» տեղատեղում Ջրպետը ցու-դարերում էր որոշ չափով հմտություն հայ մատենագրության, եկեղեցական պատմու-թյան և կանոնական իրավունքի բնագավա-ռում, որը նա ցուցաբերել էր դեռևս 1820 թվականին ֆրանսիական հնագիտական ըն-կերության պատվերով կատարած գործում: Ըստ նախագիծը նշված է «ծանոթություն իր վերայ եկեղեցական պատմության, ժողո-վոց և եկեղեցական կանոնաց հայոց»¹⁹:

1826 թվականին դրական լուծում է ստա-նում Ջրպետի Փարիզի Թիֆլիս տեղափոխ-վելու հարցը:

Անկասկած, այդ իսկ պահից Ջրպետի տեղը Փարիզում զբաղում է ֆրանսիացի հա-յադես Լը-Վալան-գը-Ֆլորիվալը, որն հե-տագայում մեծ անուն վաստակեց իր բաղ-մաթիվ աշխատություններով:

Նույն 1826 թվականից սկսում է Ջրպետի գործունեության երկրորդ շրջանը՝ Թիֆլի-սիում, նախ իրեն ֆրանսերենի դասատուի, ապա և տեսչի Ներսիսյան դպրոցում:

¹⁸ Նույն տեղում, էջ 78—82:

¹⁹ Նույն տեղում, էջ 79—80:

22 Կ. Կոստանյանց, «Հայագիտությունն Արևմտեան եւրոպայում», Թիֆլիս, 1910, էջ 83—84: Այս Լը-Վա-լան-գը-Ֆլորիվալը, որին հիշատակում է ի միջի ալ-լոց, և Մ. Նալբանդյանը («Անտիպ էջեր», 31, 32, «Նրկերի լիտկատար ժողովածու», II, 332, 340), 1831 թ., Մ. Բրոսսեի հետ ճանապարհորդել է ղեպի կովկաս և ցարական կառավարության ժամանակվա մի զբաղության մեջ կոչվում է «էկվալան» և Բրոս-սեի հետ միտքին ճանաչվել է բաղարականապես տա-րարելու» (Մ. Мелнкест-Бек, «Французские ар-менисты первой половины XIX века по архивным материалам Грузии. Яков Шахан-Джрпет, Ле-Валлан-де-Флоривал и Мари-Фелешите Броссе», «Թիֆլիսի Պետ. համալսարանի աշխատություններ», հատ. 63, Թիֆլիսի, 1954, էջ 299—310):

նվ ահա ալդ գործունեության բնութագիրը տալիս է Ս. Մալխասյանը, որը համարում է նրան՝ Զրպետին՝ մի տեսակ արկածախնդիր դեմք գիտության և մանկավարժության ասպարեզում, նույնիսկ «առաջին» չարիքը նորաբաց ներսիսյան դպրոցի գլխին²³, բանի որ 1828 թվականի սեպտեմբերին Ալամդարյանի կողմից նրան հանձնված 400 աշակերտի փոխարեն 1829 թվականի մայիսին նա Ալամդարյանին «վերադարձրեց ուսումնարանը 150 աշակերտով», «այնպես, որ Ալամդարյանն ստիպված էր յուր տարին երեք շինածը, իսկ Զրպետի 9 ամսվա ընթացքում կիսով չափ բանդածը նորից վերաշինել» և այլն²⁴:

Ի վերջո Ս. Մալխասյանը նշում է և այն, որ Զրպետի 2 տարվա և 3 ամսվա գործունեության համար դպրոցը նրան ռոճիկ և ճանապարհածախս վճարեց, և բացի դրանից տրվեց որոշ նպաստ և Յրանսիա վերադառնալու համար կառք դնելու դրամ: «Զրպետը սակայն էլ Փարիզ չդարձավ, մինչև կյանքի վերջը մնաց Իփֆլիսում և կառավարությունը նորան կենսաթոշակ նշանակեց տարեկան 500 ռ.»²⁵:

Բարեպառտեհ հանգամանքների դասավորությամբ, Զրպետը Թիֆլիսում բնակվում էր նույն տանը, որտեղ ապրում էր Սունդուկյան բնասանիքը. նա փոքրիկ Գարրիբեյին (սակազա մեծ թատերագրին) սովորեցնում էր «հայերեն, դրարար և իտալերեն, իսկ Զրպետյանի ֆրանսուհի կինը՝ ֆրանսերեն»²⁶:

Զրպետը վախճանվել է Թիֆլիսում 1838 թվականին:

Զրպետի գործունեության երկրորդ շրջանի արդյունքն է, ի միջի այլոց, նրա մի երկասիրությունը, դրված, կամ, ավելի ճիշտն ասած, ավարտված Թիֆլիսում 1829 թվականին, որը նորերս հայանադործվեց Վրացական կենտրոնական պատմական արխիվում:

Դա մի սովոր աշխատություն է հայոց պատմության և կանոնական իրավունքի բնագավառից, հորինված ֆրանսերեն, հարց և պատասխանի ձևով, երկծալ (ին ֆոլիո) 305 էջ, իրողկացած երկու մասից, յուրաքանչյուրն իր հերթին երեքական տետրից (ամբողջ գործը հետևապես վեց տետր է), տաբերված վերնադրերով: Ձեռագիրը, որ մեղ

էր հանձնված ցուցակագրելու, մենք նպատակահարմար գտանք առանձնացնելու այսպես կոչված «առանձնապես կարևոր գործերի» հավաքածուի մեջ № 263-ի ներքո²⁷:

Առաջին մասի վերնագիրն է՝ «Réponses et éclaircissements [t]s sur les 85 questions proposées relativement à l'histoire aux lois canoniques et à l'état ancien et moderne du clergé arménien, données d'après les usages existants et les témoignages des auteurs originaux du pays. Par J. Chahan de Cirbied, Tiflis, le 29-ybre 1829», այսինքն «Պատասխանիք և մեկնարանությունք հայոց պատմության, կանոնական իրավունքի և հոգևորականության վաղեմի և ներկա կացության վերաբերյալ, առաջագրված 85 հարցերին, — տրված համաձայն տիրող սովորությունի և ըստ վկայության բնիկ հայ հեղինակների. ի ձեռն շ. Շահան-Զրպետի. Թիֆլիս, 29 նոյեմբերի 1829 թ.»: Ընդամենը 1—155 էջ, Ա—Գ տետրակներով:

Երկրորդ մասը կրում է հետևյալ վերնագիրը. «Réponses et éclaircissements [t]s sur d'autres questions proposées, touchant la religion, l'histoire et la hiérarchie ecclésiastiques chez les arméniens. Par. J. Chahan de Cirbied», այսինքն «Պատասխանիք և մեկնարանությունք հայոց կրոնի, պատմության և եկեղեցական նվիրապետության վերաբերյալ առաջագրված հարցերի. ի ձեռն շ. Շահան-Զրպետի», սակայն այս անգամ առանց գրության տեղն ու ժամանակը նշելու Գրաված ունի 156—305 էջերը, Դ—Զ տետրակներով:

Իսկ տետրերի դասավորությունն այսպես է. Ա՝ 1—42 էջ, Բ՝ 43—88 էջ, Գ՝ 89—155 էջ, Դ՝ 156—216 էջ, Ե՝ 217—268 էջ և Զ՝ 269—305 էջ:

Զրպետի այս նորահայտ աշխատությունը ներկայացնում է իրենից մի տեսակ փորձ հայոց պատմության և գերազանցապես, եկեղեցական պատմության և կանոնական իրավունքի ամփոփման, դրված շ. Միքայել Չամչյանի «Հայոց Պատմութեան» (հատ. Ա—Գ, Վենետիկ, 1784—1786) և ձեռագիր «կանոնագրքերի» զդալի ազդեցությամբ, որը, սակայն, կանոնական իրավունքի շարադրման մասում առաջինն է իր տեսակով:

27 Մանրամասն տե՛ս Մ. Меликсет Бек, «Французские армяны первой половины XIX века по архивным материалам Грузии», стр. 302—304:

28 Բնագրում՝ éclaircissements.

23 Ս. Մալխասյանը, հիշյալ աշխատությունում, էջ 33—36, հմտ. 170—175, 178—179, 184—185, 188, 189, 191, 208, 216 և այլն:

24 Նույն տեղում, էջ 35—36:

25 Նույն տեղում:

26 Գ. Արով, «Գարրիբեյ Սունդուկյան», Երևան, 1953, էջ 20:

Դեռ ավելին, նա մի քանի տարով կանխում է կարդինալ Avg. Malus-ի լույս ընծայած լատիներեն զրթին՝ „Ecclesiae Armenae canones selecti“, որը ապաված է «Scriptorum veterum collectio ex Vaticanis codicibus edita» շարքի Ժ հատորի Ա պրակում (Հոռմ, 1938, էջ 269—316)³⁰։

Քացի Հ. Մ. Չամչյանից և Կանոնագիրք Հայոց-ից Զրպետը լայն չափով օգտագործել է Փարիզի արքայական (այժմ ազգային) մատենադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուն և հայագիտական հրատարակությունները։ Ուստի և նա ի վիճակի է մի առ մի հիշատակել բավականին թվով սկզբընադրյուններ։

Հայ մատենագիրներից Զրպետը հիշատակում է մի քանի տասնյակ անուն։ Զենոբ Գլակ, Նիզի, Մեսրոպ երեց, Մովսես Խորենացի, Հովհան Մամիկոնյան, Սամվել Անեցի, Մատթեոս Նղեսացի, Ստեփանոս Օրբելյան, Վարդան և այլն, նաև՝ Միքայել Ասորի, որքան սա մինչև ԺԺ դարի վերջը հայ հեղինակ էր համարվում, ապա Ղսգար Կաթողիկոս Զահեցի, Հ. Ղուկաս Ինձիճյան և այլն։

Գրքում զգալի է նաև Վարդ հարանց-ի և «Յայսմաւորք»-ի ազդեցությունը, իսկ «Կոմիտասի»-ից փաղված են տվյալներ եկե-

ղեցական ժողովների ժամանակագրության և սահմանումների մասին, սկսած Վալսաշապատի 325 թվականի ժողովից և մինչև Նրուսաղեմի 1651 թվականի ժողովը ներառյալ, որոնց տեսությունը նվիրված է աշխատության Բ մասի Ե տետրը (էջ 217—242)։

Տեղ-տեղ Զրպետը հիշում է և լատին ու իտալացի հեղինակների գործերը և սրանց թվում «Compendio storico della nazione armena del Marschese de Serops (armenienne d'origine)»։

Երրեմն-երրեմն Զրպետը խոսում է ժամանակակից անցքերի մասին, օրինակ Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցու և գեներալ Պասկևիչի փոխհարաբերությունների մասին, որոնց ժամանակակիցն էր ինքը, հիշելով միջանկյալ Թիֆլիսը (էջ 279), ուր գրվել կամ, ավելի ճիշտն ասած, ավարտվել է այս գործը 1829 թվականին, եթե իհարկե, ընդունվի, որ այն սկսված լիներ դեռևս Փարիզում եղած պահին և որոշ աորնչություն ունենար դեռևս 1820 թվականին ձեռնարկած և անտիպ մնացած երկի հետ։

Զրպետի նորահայտ ֆրանսերեն երկասիրության առաջին մասն ավարտվել է Թիֆլիսում 1829 թվականին, Երկրորդ մասը թվական չունի։ Սակայն պիտի ենթադրել, որ այն ևս ավարտված է նույն 1829 թվականին կամ թե նրանից մի քիչ ուշ։

Ի վերջո, կարևոր ենք համարում նշել, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «армяно-григорянская», նույնիսկ «армяно-грегорианская» (վերջինս ֆրանսերենի ազդեցությամբ՝ S. Grégoire-ից) հորդորումը 1836 թվականի 11 մարտին «Բարձրագույն» հաստատված «Պոլոժենիե»-ում, անկասկած, Զրպետի համապատասխան կոմիսիայում մասնակցելու ազդեցությունն է կրում։

Տե՛ս նախորդ ձեռագրագրությունը։

30՝ Հմմտ. մեր «Об источниках древне армянского права», Ներհրադ, 1925, էջ 143—163, նաև մեր «Указатель литературы по истории права Грузии, Армении и Азербайджана», Թիֆլիսի, 1939. մեր օրոք հրապարակված նմանորինակ գործերից տե՛ս «S. Congregazione Orientale. Codificazione Canonica Orientale. Font. Fascicolo VII. Disciplina Armena. Testi vari di diritto canonico Armeno (secoli IV—XVII)», Հոռմ, 1932, 632 էջ։

